Ռափայել Պատկանյան

Թալանած գեղ

Ծուխը ամպի պես կելլեր դեպի վեր,
Տընտրղի նման բոցը կրքալեր .
Տուն, եկեղեցի, պարտեզ ու այգի
Անսիրտ, անհոգի մատնած են կրակի:

Հայերն հոտի պես սարսած կրվազեն,
Անցնող-դարձողեն օգնություն կուզեն .
Օգնությո՛ւն: Խեղճե՛ր: Կատղած օսմանլին
Չար մահ կրսպառնա զարհուրած հային:

Մայրը կականով կրփրնտրե աղջիկ,
Աղջրկան գերի տարավ չար տաճիկ,
Իր որդուն կուզե հայրը շրվարած,
Որդուն կրտեսնե խազուխի դրրած:

Հայի հավաքած մալը աղքատին
Հելալ փայ եղավ անկրշտում քյուրդին,
Խեղճը հուսահատ կ’աշե երկրնքին,
Կրսպասե նրպաստ հրեշատակ զորքին:

Խաբուսի՛կ հույսեր . . . Դեռ շատ ու շատ դար
Պիտի խաբվիս, հա՛յ, ինչպես խաբվեցար:
Թե ինքրդ չանես քու գրլխու ճարը,

Ե՞րբ պիտի օգնե քեզի օտարը . . .

Խե՛ղճ մարդ, մի անգամ մեռնելե վախցար,
Մինչ մահվան օրը հազար մահ տեսար
Հազար մեռնելը հազար ցավերով
Զավակիդ փոսը ձեռքովդ փորելով . . .

Դու միշտ եղբորը անտերունչ թողիր,
Մատիդ ծայրովը նորան չօգնեցիր .
Գլուխն առավ խեղճը, գընաց հեռացավ . . .
Հայաստան ձեռքեդ ամայի դարձավ:

Դու կարծեցիր թե՝ ոսկին մեծ բան է,
Ամեն մի ցավի, դարդի դարման է .
Ապա հե՞ր ոսկիդ քեզի չի օգնեց,
Կընկաղ, զավակիդ մահն չի փըրկեց . . .

Ա՛խ, հայե՛ր, հայե՛ր, թե որ ձեր ոսկին
Կիսով չափ զոհվեր հօգուտ հայ ազգին,
Առմիշտ կըդադրեր ձեր լացն ու կական
Ու դրախտ երկրավոր կըլլար Հայաստան: